վորութիւնս իւրեանց, որք հաստատեալ են 'ի ժամանակս յաղթութեան։ Գրեալ է 'ի սոյն թղթի հրովարտակն · առնել համաձայն հրովարտակին և վճռոց եւ չէրիի օրինաց, և արգելուլ զանիրաւի հակառակողս։

Ի սմին ժամանակի Կարապետ վարդապետ ոմն, որ զանձնէ ասէ լինել Երուսաղէմացի, մաքրեաց զեկեղեցին Ս · Աստուածածնի 'ի ձորն Դեթսեմանի · զի հեղեղք անձրեւաց լցեալ էին անդ հողս, խիճս և քարինս, և գերեզմանն միայն երեւէր, տալով զվարձս մշակաց, եւ եխից զխորչս և զբաւիղս, զոր ռամիկք կոչէին դրունք դժոխոց։ (1230)։

Հանգեաւ 'ի Քրիստոս Տէր Վարդան Արքեպիսկոպոսն Կարուց, մեծիմաստ քերթողն եւ եղբայր Յովհաննիսի 'ի թուին Հայոց ՈՁԷ (1238) · և թաղեցաւ 'ի գաւթի տաճարին Ս · Յակոբայ, որոյ արձանագիրն երեւի ցարդ 'ի մայթս ճախակողմեան։

Իսկ Սալէհ Էյուպ Մէլիք Եգիպտոսի կամեցեալ տիրել բովանդակ Պաղեստինայ, եկն 'ի Գազա, այն է Ղազզէ, և զկնի իւր եհաս բազմութեամբ Եգիպտական զօրաց զօրավար նորին Բէբին Էտտին Պիպարս 'ի Մէտիրուք ցեղէ։ Եւ Սալէհ Իսմայիլ տէրն Դամասկոսի առաքեաց 'ի վերայ նորա զզօրավար իւր · եւ նորա հասեալ 'ի Պաղեմայիս դաշնակցեցաւ ընդ Լատինս, խոստացեալ տալ նոցա զմասն ինչ երկրին և կամ զերուսաղէմ · և նոքա ուրախութեամբ եառեն նմա զհեծեալ եւ զհետեւակ զօրս։ Եւ 'ի խմբիլ մարտին պարտեցան Լատինք եւ դարձան 'ի փախուստ · զհետ մտեալ Եգիպտացւոց կոտորեցին զբազումս 'ի նոցանէ 'ի բերան սրոյ · եւ Սալէհ Էյուպ տիրեաց Գազայի և Յովեզերեայ քաղաքաց ոմանց · էառ նաեւ զԵրուսաղէմ (1240), և բազմութեամբ զերեաց դարձաւ յԵգիպտոս։ Իսկ այլք ասեն թէ՝ յետ առման քաղաքին սրոյ, սպանին զամենայն բնակսն · և յետադայ ամին դարձեալ յաւարի առին զայն, նախ քան զյանձնել Սալէհ Էյուպայ յաջորդին Նիմէտտինի։ Եւ այնուհետեւ մնաց Երուսաղէմ 'ի ձեռս Իսլամաց մինչ 'ի ժամանակս Սուլթան Սէլիմ արքայի Օսմանցւոց, որպէս յառաջ բերեն արաբացի պատմիչք։